

ԲԱՆԹՂԹԱԿԻՑԸ  
=ՅԵՎ ՆՐԱ=  
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

ԲԱՆԹՀԹԱԿԻՑԸ  
=ՅԵՎ ՆՐԱ=  
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

17069  
II  
A 24556



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ - 1980

*Հրատ.* № 1171

*Գրառեալ. № 2971 (բ) Պատվ. № 174 Տիր. 1500*

---

*Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում*

## ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՊԻԹԻ ԳՐԵԼ ԹԵՐԹՈՒՄ

### 1. ԿԱՐՈՂ Ե ԳՐԵԼ ԱՄԵՆ ՎՈՐ

Բանվորը, բանվորուհին, դյուդացին, գեղջկուհին, ծառայողը, ամեն մի աշխատավոր կարող ե և պետք ե զրի մեր պատի և տպագիր թերթերում։

Շատերը կարծում են, թե թերթերում գըրելու համար, պետք ե նրա աշխատակիցը լինել, կամ ինչ վոր հատուկ տաղանդ պետք ե ունենալ։ Դա ճիշտ չե։ Մեր մամուլը պրոլետարական մամուլ է։ Նրան կարող ե մասնակցել ամեն վոք, նույնիսկ կիսադրագետ մարդ։ Թող թղթակցությունը գրված լինի ծուռ ու մուռ, թող շատ սխալ լինի, սակայն յեթե նրա մեջ ճիշտ ե կարեոր մխաք կա և թղթակցությունը շարադրված ե այնպես, վոր նրա միտքը հասկանալի յե, ապա պատի, կամ տպագիր լրագրի խմբագրության մեջ ալդ թղթակցությունը կուղեն, կտպագրեն և կաշխատեն, վոր գրա առթիվ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն։

## 2. ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԵԼ

Որինակ, բանվոր Պետրոսյանը տեսնում եր,  
վոր իր աշխատած գործաբանի բակում, բացող-  
յա, վեր ընկած են արտասահմանից բերված  
դազգյանները։ Հանդիպում ե Պետրոսյանը մի  
ալլ գործարանում աշխատող իր ընկերոջ։ Խո-  
սում են գործարանային գործերի մասին։ Պետ-  
րոսյանը իր ընկերոջ պատմում ե, թե իրենց  
գործարանի բակում անխնամ վեր ե ընկած ար-  
տասահմանից բերված սարքավորումը և այլն։  
Ահա այս ամենը Պետրոսյանը պետք ե զրի առ-  
նի պարզ լեզվով այնպես, վոր կարծես զրուց ե  
անում իր ընկերոջ հետ և ապա ուզարկի պատի  
կամ տալագիր լրագրին, իսկ լրագիրը միջոցներ  
ձեռք կառնի, վոր այդ թերությունը վերանա։

Ի՞նչ պետք ե զրել ներկա դեպքում։ Պետք ե՝

1. Գրի առնել հենց փաստը, իրողությունը։
2. Հիշատակել, թե վորակեղ ե կատարվել այն։
3. Յերբ ե կատարվել.
4. Յերբ և ի՞նչ միջոցներ են ձեռք առնը-  
վել տեղում՝ այդ բացը վերացնելու համար։
5. Ի՞նչ պատճառով առաջ յեկավ այդ բո-  
լորը.
6. Ինչպես ուղղել մատնանշված թերու-  
թյունը.

Ալսպիսի մի թղթակցության կարող ե գըել  
ամեն վոք: Թերեւս նա լավ շարադրված չի լինի,  
սակայն ալդ կարեոր չե՞ խմբադրատանը կուղո-  
ղեն: Կարեոր ե միայն, վոր թղթակցության մեջ  
հիշատակված լինեն բոլոր անհրաժեշտ փաս-  
տելը:

Անհրաժեշտ ե նաև, վոր թղթակցությունը  
ճիշտ լինի: Յերբեք մի գըի լսողաց, ուրիշի պատ-  
մածի վրա հիմնվելով, այլ զըիր միայն այն փաս-  
տերի մասին, վորոնք քեզ անձամբ հայտնի յեն  
կամ վորոնք ինքու ստուգել ես:

Յերբ զըում ես, միշտ հիշիր, վոր խմբագ-  
րությունը և ընթերցողը չեն իմանում այն ա-  
մենը, ինչ վոր տեղի յեւ ունենում ձեզանում: Այդ պատճառով քը ակցության մեջ պետք է ա-  
մեն ինչ բացարկված, պարզված լինի:

Միևնույն ժամանակ, թղթակցությունը չը  
պետք է ծանրաբեռնել ավելորդ մանրաժամանու-  
թյուններով: Շատերը սկսում են գըել ամեն  
բանի մասին, ինչպես ասում են՝ Ազամ—Յեփա-  
յից: Միշտ պետք ե գըել այն, ինչվոր ուղղակի  
կապ ունի քո գրածի հետ:

Ավելի լավ ե ամեն մի առանձին թղթակ-  
ցության մեջ գըել միմիայն մի փաստի, մի դեպ-  
քի մասին: Յենթադրենք, թե դու ուզում ես  
լրագրում գըել արտադրական խորհրդակցության

աշխատանքի և կուսակցական բջիջի գործունեցության մասին։ Այդ հարցերից ամեն մեկի համար գրիր առանձին թղթակցություն։

Ընդհանուր խօսքերով մի գրեթե, այլ ավելի շատ փաստեր տուր թղթակցության մեջ։ Ահա, որինակ մի թղթակցություն։

«Մեր գործարկոմը լավ ե աշխատում։ Նա բարելավեց արտադրական աշխատանքը, մեծ նըգաճումներ ե արել աշխատանքի պաշտպանության գործում և բարելավել է կուլտուրական-լուսավորական աշխատանքը։ Մեր գործարկոմը մեծ հեղինակություն ե վայելում բանվարների շրջանում։»

Այսպիսի թղթակցություն միանգամայն անպետք ե, նրա մեջ կա միայն ընդհանուր խոսքեր և վոչ մի փաստ չկա։

Ի՞նչ ե նշանակում, թե զործարկոմը լավ ե աշխատում, կամ թե մեծ նվաճումներ ե արել աշխատանքի պաշտպանության գործում։ Քեզ թըգում ե թե զործարկոմը լավ ե աշխատում, իսկ մի ուրիշը կծանոթանա այդ աշխատանքին և հգտնի, վոր նա այնքան ել լավ չի աշխատում։ Լոկ խոսքերին վոչ վոք չի հավատա։ Դու փաստերով ցուց՝ տուր գործարկոմի աշխատանքը։ այն ժամանակ խմբագրությունը և ընթերցողը իրենք կկարողանան զնահատել նրա աշխատան-

քը, Դու գրիր, թե ի՞նչ եւ արել գործարկոմը,  
ի՞նչպես եւ կատարել նա իր աշխատանքը, ի՞նչ  
արդյունք եւ տվել այդ աշխատանքը, պատմիր  
այդ բոլորի մասին, այն ժամանակ քո թղթակ-  
ցությունը հետաքրքրական, պիտանի կլինի և  
ուրիշները կհասկանան, թե գործարկոմն ի՞նչպես  
պետք եւ աշխատի:

Առհասարակ, պետք եւ հիշեր վոր թերթի  
ամեն մի հոգվածը պետք եւ սովորեցնի, թե ի՞նչ-  
պես պետք եւ աշխատել կամ ի՞նչպես չի կարե-  
լի աշխատել: Գրիր վոչ միայն թերթությունների  
մասին, այլ հաղորդիր նաև նվաճումներն ու հա-  
ջողակիցները: Սովորել կարելի յեւ նաև լավ ո-  
րինակների միջոցով:

Գրել սկսելուց առաջ լավ մատծիր թե, ին-  
չի մասին ես ուզում գրել: Յերբ քեզ համար  
պարզ կլինի, թե դու ի՞նչ ես ուզում ասել, այն  
ժամանակ արդեն ճիշտ կլինի թղթի վրա շարադ-  
րել քո մաքերը:

Գրել սկսողներից շատերը յերկար ժամա-  
նակ պառիս են ճաքացնում, թե ի՞նչ վերնազիր  
փուն այս կամ այն թղթակցության վրա: Նախ  
պետք եւ գրել ամրող թղթակցությունը, այ-  
նուհետեւ ճիշտ կլինի նրա վրա վերնազիր դնել:  
Վերնազիրի վրա շատ մտածելու կարիք չկա, վո-  
րավինետեւ կարենը թղթակցության վերնազիրը

չե, այլ նրա ելությունը, բովանդակությունը։ Խմբագրությունը միշտ ել կարող ե հեշտությամբ ուղղել վերնապիլը։

Տպագիր թերթերին մի զրիր այն բանի մասին, վորը տեղական, փոքր նշանակություն ունի և վորը կարելի լե զետեղել պատրագրում ու նրա միջոցով ել ուղղել գործը։ Մի զրիր նաև մի բանի թերթերին միևնույն նյութի մասին։

Իմացած լեզիր, վոր խմբագրությունը գաղտնի լե պահում քո աղջանունը և վոչ վոքին չի հաղորդում՝ բացի դատարանից։ Յեթե քեզ հալածանքի յենթարկեն քո թղթակցությունների համար, քեզ կպաշտպանին կուսակցական ուխորհրդակին որդանները և մամուլը։ Խորհրդային ուենթերով, խիս պատճի յեն յենթարկվում նրանի, ովքեր հալածում են թերթերում գրողներին։

Յեթե դու չես ուզում, վոր իմացվի, թե ով ե ուղարկել թղթակցությունը, կարող ես ստորագրել կեղծ անունով (հնարովի անուն գըրել, որինակ՝ Անցորդ, Ռտար, Մուրճ, և այլն)։ Թղթակցությունն այդ անունով ել կտպագրվի։ Սակայն, վորպեսզի խմբագրությունը տեղակլինի, թե վորտեղից և ումից ե ստացվել թղթակցությունը, պետք ե յուրաքանչյուր թղթակցության տակ անպատճառ գրես մանրա-

մասնորեն քո փոստալին հասցեն, քո անունը, հայրանունը, և ազգանունը, զրես թե վորտե՞ղ ես աշխատում ներկայումս և ի՞նչ աշխատանք ես կատարում:

Աշխատիր զրել կարճ նախադասություններով, վորքան կարող ես պարզ լեթե հնարավոր եւ թանաքով ու միայն թղթի մի լերեսի վրա:

### ՅՆՉՈՒԻ ՊԵՏՔ Ե ԹԵՐԹՈՒՄ ԳՐԵԼ

Խորհրդալին միութիւն թերթերին գրում, մասնակցում են մոտ կիս միլիոն բանվորներ և գյուղացիներ։ Աշխարհիս վոչ մի մասում մասսաներն այսպիսի մասնակցություն չեն ցուց տալիս մամուլին։ Դրա պատճառն այն է, վոր բոլոր չերկրների թերթերն ել համարյա միշտ ծառայում են կապիտալիստներին, պաշտպանում են նրանց շահերը։ Այստեղ մամուլը կապիտալիստներին ողնում ե խաթելու, շահագործելու և ճնշելու ազգանակության մեծավույն մասին (բանվոր դասակարգին, գլուղացիներին, գաղութալին ժողովուրդներին)։ Մասսաները այդ կապիտալիստական թերթերին դրելու բան չունեն և կարիք ել չեն զգում։ Այլ բան ե մեզանում։ Մեր մամուլը միլիոնավոր աշխատավորների մամուլն ե, սոցիալիզմը կառուցող բանվոր դասակարգի մամուլը։

Մեր մամուլին պետք է մտանակցի ամեն մի աշխատավոր, վորովինետեղ նա յերկրի տերն ու կառուցողն է, նա՝ ամբողջ բանվոր դասակարգի նետ սփասին պատասխանատու յե մեր սոցիալիստական ժինարարության բախտի համար։

Առաջ, յերբ բանվորը իր խաղեյինի բակով անցնելիս տեսներ, վոր յերկաթը վիր և ընկած և ժանգոտում ե զրա մասին նա չեր մտածում, վորովինետև ժանգոտում ե ուրիշի խաղեյինի ապրանքը։ Իսկ այժմ գործարանները պատկանում են բանվոր գառակարգին։ ամբողջ բանվոր դասակարգն իր ուժերը լարելով, կառուցում ե իր պետությունը և այժմ արդեն վոչ թե խաղեյինի, այլ իր գործարանում ժանգոտվող յերկաթի ամեն մի կտորը գանդաղեցնում ե շինարարությունը, խոչընդուռ և հանդիսանում նրան։ Ամեն մի բանվոր, վորտեղ և ինչի վրա յել ժանգ տեսնի, պետք ե աշխատի նրա տարածման առաջն առնել և լավ նաժդակով մաքրի արդեն ժանգոտած մետաղը։ Մեզանում՝ ԽՍՀՄ-ում շատ միջոցներ կան, վորոնք բանվորին հնարավորություն են տալիս ակտիվ կերպով մասնակցելու մեր ամբողջ աշխատանքին (խորհուրդներ, արհմիություններ, կոոպերացիան և այլն)։ այդ միջոցներից մեկն ել մեր մամուլն ե։

Հարլուր հազարավոր փաստերը ցույց են տալիս, վոր բանվորները և գյուղացիները կարող են և իրոք ակտիվ կերպով մասնակցում են մեր կյանքի բոլոր ասպարեզների աշխատանքին՝ ոլատի և տպադիր թերթերի միջոցով։

Կոժմունխատական կուսակցությունը և խորհրդադալին իշխանությունը շատ կարևոր են համարում, վոր մամուլի միջոցով աշխատավորությունը մասնակցի մեր պետության վերահսկողության և շինարարության։

Վ. Ի. Լենինը մեղ միշտ սովորեցրել է, վոր անհրաժեշտ կարելի լին շատ բանվորների և գյուղացիների մասնակից դարձնել մեր մամուլին։ Նա պահանջում էր, վոր բոլոր հիմնարկները և կազմակերպությունները ուշադիր լինեն մամուլի ցուցմունքներին։ ԽՍՀՄ-ում կան խորհրդային որենքներ, և կարգադրություններ, վորոնք պատի ու տպադիր թերթերում պրոդ բանվորներին և գյուղացիներին պաշտպանում են հալածանքներից։ այդ որենքներով, մեր բոլոր հիմնարկները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել թղթակցությունների մեջ շոշափված հարցերի առթիվ։

Խորհրդային իշխանության շատ ուժենեցր յեվ այդ որենքների ուղղումները առաջ են յեկել մեր մամալում բանվարիների յեվ գյուղացիների գետեղած թղթակցությունների ընորհիվ։

Մեր խորհրդավին պետությունը տասնյակ և  
հաշյուրավոր հաղար ոռուրլիների խնայողություն  
և ունեցել շնորհիվ նույն այդ թղթակցություն-  
ների: Բանվորները և գյուղացիները մամուլի մի-  
ջոցով շատ են ոգնել ԽՍՀՄ-ի ամբացման և մեր  
կյանքի բարվոքման:

Ոգնում և թերությունները վերացնում ե-  
նուշ միայն այն թղթակցությունը, վորը տպա-  
գրվում ե թերթում, այլև տոհասարակ խմբագ-  
րությանն ուղարկված ամեն մի թղթակցություն:  
Թերթերն չտպագրված թղթակցություններն ու-  
ղարկում են համապատասխան կազմակերպու-  
թյուններին՝ քննություն կատարելու և հարկա-  
վոր միջոցներ ձեռք առնելու: Սովորաբար ու-  
ղարկվում են թղթակցությունների պատճենները՝  
առանց հիդրինակի (թղթակցությունը գրողի) ազ-  
գանվան: Հիմնարկները և պաշտոնատար անձինք,  
յեթե նրանց հայտնի լե թղթակցության հեղինա-  
կի ազգանունը, որենքով պարտավոր են գաղտ-  
նի պահել այն:

Չտպագրված թղթակցությունների շնորհիվ  
ձեռք են բերվել համարյա նույնքան նվաճում-  
ներ, վորքան և տպագրվածների միջոցով: Թեր-  
թերի խմբագրությանն ուղարկված վոչ մի նա-  
մակ, յեթե նրա մեջ կա նեանակություն ունե-  
ցող վորեվե փաստ, չի կարչում տեսողություն:

## 4. ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Ե ԳՐԵԼ

Բանվորն ու գյուղացին նախ և առաջ պետք ե զբեն թերթին այն ամենի մասին, վորով ապրում և հուզվում ե իր աշխատած դործարանը կամ իր դյուղը։

Դործարանում, որինակ վերանալվում են նորմաները և արտադրանքի դնահատումները։ Բանվորները դրա մասին շատ են խոսում, և հուզվում են։ Բանթղթակիցը պետք ե կարողանա հասկանալ, յերկան հանել բանվորների տրամադրությունը, նրանց առաջարկները, գնահատի նրանք և այդ բոլորի մասին դրի պատի լրադրին կամ ապադիր թերթին։

Դործարանը ռացիոնալիզացիալի յե լենթարկվում։ Տվյալ գործարանում, որինակ այդ գործը կատարվում ե տնկազմակերպ, արտադրական հանձնաժողովն ու բանվորները մասնակից չեն այդ գործին։ Պետք ե այդ բոլորի մասին ևս գրել թերթերին, նախապես հավաքելով հարցին վերաբերող բոլոր փաստերը և բանվորների առաջարկները։

Պետք ե վոչ միայն նկարագրել, թե ի՞նչ են առում, այլ և տալ այդ խոսակցությունների գնահատականը, այսինքն՝ ապացուցել, թե դրանցից վորն ե արժեքավոր և ուշադրու-

թյան արժանիք, Զպետք և գերազնահատել փաստը, պետք և վերջինս ստուդել և առանց ապացուցի ընդհանրացումներ չանել:

Որինակ, ընկերներից մեկը գրում ե, թե մեր գյուղում, գյուղացիք դժգոհ են ինքնահարկման որենքից: Սառւգեցին այդ տեղեկությունը տեղում և պարզվեց, վոր այն ամենը, ինչ վոր զըրել եր թղթակիցը, ասում են վոչ թե գյուղացիք, այլ մի քանի կուլակներ: Գյուղթղթակիցը թեթևամիւ կերպով մի քանի կուլակների կարծիքներ ներկայացրել եր վորպես ամբողջ գյուղի կարծիք: Թղթակցություններում միշտ պետք ե մատնանշել, թե թղթակիցն ի՞նչ բանի վրա հիմնվելով արել ե իր լեզրակացությունները, ում հետ և խոսել, ում ասածին ե լսել: Այստեղ ինարկե կարեռը ազգանունները չեն, այլ կարեվոր և պարզել, թե զլիսավորապես գյուղացիների վճր խավերը կամ խմբակներն են արտահայտել տվյալ կարծիքը:

Պատի լրագրին կամ տպագիր թերթին պետք ե գրել արտադրական, արհմիութենական, կուսակցական, կոռպերատիվ և հասարակական կլանքի բոլոր բացերի մասին: պետք ե գրել այն բոլոր թերությունների մասին, վորոնք չի կարելի վերացնել համապատասխան տեղական կազմակերպությունների միջոցով և վորոնք հասարակական նշանակություն ունեն, կարեռը են:

Անհրաժեշտ ե գրել նաև այն հարցերի մասին, վորոնք արծարծում ե մեր մամուլը։ Յենթադրենք, թերթը գրում ե, վոր մեզանում արտասահմանից բերված սարքավորումը լավ չէ ոգտագործվում։ Տես—թե այդ գործարանում, վորտեղ դու յես աշխատում, ի՞նչ դըության մեջ ե ալդ գործը։ Ծանոթացիր այդ հարցին և յեթե հետաքրքիր կարեռը փաստեր դտնես, գրիր թերթին գրա մասին։

Յեթե թերթը գրում ե, վոր միքանի գործարաններում ավելացել են գործալքումները կամ անտես ե առնված աշխատանքի պաշտպանությունը—դու յել տես, թե ձեղանում ի՞նչ վիճակի մեջ ե ալդ գործը և զբիր թերթին։

Պետք ե դիտենալ գործի կպչել՝ թերթին ովնելու, այս կամ այն հարցը բարձրացնելու, վերջնիս ամեն կողմից շոշափելու համար։

Սակայն այդ պետք ե այնպես անել, վոր չըմասվի, չթուլանա թղթակցի հիմական աշխատանքը, վորն ե՛լուսաբանել թերթում բանվորին և զյուղացուն շրջապատող մասսաների իրական տրամադրություններն, ապրումները, մտքերը և պահանջները։ Այդ ե ամենագլխավորը յեվ նիմնականը։

Միայն թերթում տպագրելու համար չե, վոր նյութ պետք ե ուղարկել մամուլին։ Հնկ.

Լենինը գրել ե. «Մենք խնդրում ենք վոր բացի դրանից դրեք նաև վորպես նամակագրություն, հայտնապես վոչ թղթակցության, այսինքն՝ վոչ տպագրելու համար, այլ խմբագրության հետ ընկերական կապ հաստատելու կամ և նրան տեղեկություններ առալու համար, տեղեկություններ առալու վոչ միայն փաստերի ու անցքերի, այլև տըամադրությունների մասին»։ Լենինի այս ավանդը պետք է հիշեն բոլոր բանվորներն ու գյուղացիները։ «Հայտնապես վոչ տպագրության համար» ուղարկված նամակները շատ շահագրգիռ են և հսկայական նշանակություն ունեն, վոր մեր մամուկը կարողանա ըմբռնել բանվորների և գյուղացիների ամենալայն խավերի արամադրությունները, պահանջները և մտքերը։

Մեզանում շատ քիչ են գրում մեր հաջողությունների և նվաճումների մասին։ Դա միանգամայն հասկանալի լի։ Մենք արագորեն առաջ ենք ընթանում։ Այդ առաջընթացության ժամանակ մենք պետք են հաղթահարենք մեր շինարարությանը խանգարող այլ և այլ խոչընդոտներ։ Յեվ հարկավ, մենք գրում ենք նաև և առաջ այն բաների մասին, վորոնք խանգարում են մեզ։ Որինակ, յենթադրենք, թե մենք լավ կառուցեցինք մի նոր գործարան, բայց բակում վեր

և թափված զիբիլը, վորը խանգարում ե յերթեհկության, Կարող ե պատահել, վոր բանվորը թերթում գրի զիբիլի կույտերի մասին և չգրի, թե ի՞նչպիս ե կառուցվել գործարանը, ինչնվաճումներ են յեղել արդ շինարարության կազմակերպման գործում, աշխատանքի ի՞նչ յեղանակներ են գործադրվել և այլն։ Վոր մենք աչքաթող ենք անում մեր խոշորագույն նվաճումներն ու հաջողությունները և չենք նկատում նոր կառուցված տունը, ալ տեսնում ենք միայն կառուցումից մնացած տաշեղներն ու զիբիլը, — այդ, կը բենում ենք, հասկանալի յե, բայց սխալ ե։

*42556*  
Պետք ե զբել թե տաշեղների և թե զիբիլի մասին, սակայն անպատճառ պետք ե զբել նաև կառուցված գործարանի և նոր տան մասին։

Լենինը պահանջում եր, վոր մամուլը հասարակական քննադատության լենթարկի, հայտածի ամեն մի անպետք բան, գործնական անողոք, իսկական հեղափոխական կրիվ մղի պետության չարիք պատճառի, կոնկրետ վասատուների դեմ։ Նա միևնույն ժամանակ մատնանշում ե, վոր մեզանում քիչ են կոչ անում լավերից սովորելու և քիչ են դաստիարակում մասսաներին կյանքի բոլոր բնագավառների կենտրոնի, կոնկրետ որինակներով իսկական կարունի, — զրում եր նա, —

մամուլի գլխավոր խնդիրն և կապիտալիզմից կո-  
մունիզմին անցնելիս:

ԶԵ Վոր սովորել կարելի է, զլխավորապես  
լավ որինակներից: Ուստի պետք և դիտել և  
մամուլին գրել մեր կյանքում, կենցաղում և  
արտադրության մեջ նկատվող ամեն մի նոր,  
լավ բանի ծիլերը:

Լենինը մեզ սովորեցրել է, «Ավելի շատ  
ուշադրություն նվիրեցեք այն բանին, թե ինչ-  
պես բանվորական և գյուղացիական մասսան  
գործնականորեն ինչ վոր նոր բան են կառու-  
ցում իր առողջա կյանքում»:

Հետաքրքիր ե, վոր Մ. Գորկին, վորը հեռ-  
վից ուշի ուշով հետեւում եր մեր աշխատանքին,  
իր գրած մի շարք նամակներում մատնանշում  
ե, թե անհրաժեշտ ե գրել լավ յերկույթների,  
լավ բաների մասին: Նա գրում ե.

«Յես կողմնակից եմ, վոր ավելի շատ լա-  
վի մասին գրեն: Ինչու: Շատ պարզ ե՝ նրա  
համար, վոր վասն ավելի վատ չե, քան յեղել  
ե մինչև այժմ, իսկ լավը մեզանում այնքան  
լավ ե, ինչպես յերբեք վոչ մի տեղ չի յեղել:  
Խավարն ավելի մութ ե թվում, վորովհետեւ  
պայծառն ավելի լուսվաոր դարձավ: Յես իրա-  
կանությունը չեմ չափազանցում, յես խուլ չեմ,  
համը չեմ, գիտեմ, վոր մեզանում շատ խողու-

թյուն կա, քիչ չի դլուղերում, վասնիշների, հարքեցողների և ծույլերի թիվը։ Յես տեսնում եմ, վոր մարդիկ մեծ մասամբ իրենց գեռ սոսկ բանվոր համարելով, լավ չեն զիտակցում, վոր նրանք արդին իրենց լերկրի լիակուտար տերն են և նրանց ամեն մի աշխատանքը, վորքան ել նա աննշան թփա նրանց, այնուամենախիվ պետական գործ եւ և կտտարում են իրենց և վոչ թե ոտար աղալի համար և բացի զըանից զա մի բան և ամբողջ աշխարհի աշխատավոր ժողովրդի համար։ Դուք զիտեք, թե այդ դասը ինչպես հասկացել են ամբողջ լերկրագնդի վրա։ «Հավը շուտով չի հասնում» ինքնըստինքյան հասկանալի լե, վոր վատին պետք ե անողոք կռիվ հայտարարել մինչև վոչնչացում, իմ կարծիքով, խորհըրդագալին մամուլն այդ զործը կատարում ե նրաշալի կերպով և չի կարելի ժխտել, վոր նաև աղողոք ե ինքնաքննադատության նկատմամբ։

## 5. ՈՎՔԵՐ ԵՆ ԲԱՆԳՅՈՒՂՑՂԱՑԿԻՑՆԵՐԸ

Բանվորները և դյուղացիները հաճախ նաև մակ են զըում մեր թերթերին, և հարց են տալիս, թե ինչպես կարող են նրանք բանթղթակից դառնալ, նրանք խնդրում են իրենց ընդունել, արձանագրել վորպես բանթղթակից կամ գյուղ-

թղթակից։ Այդպիսի նտմակները թյուրիմացության արդյունք են։ Վորեն տեղ ընդունվելով կամ արձանագրվելով չե, վոր բանթղթակից կամ դուղթղթակից են դառնում։ Պատրագում կամ տպագիր թերում գրող բանվորը կոչվում է բանվորական թղթակից կամ կրնա՞ բանքը-թակից, իսկ յեթե զրոյը դուղացի յէ, կոչվում է գյուղի թղթակից կամ կրնա՞ գյուղեղակից։ Բանթղթակցությունը մի պաշտոն կամ կոչում չի, այլ հասարակական աշխատանք։ Բանթղթակիցներին վոչ ընտրում են վոչ ել նշանակում, այլ յուրաքանչյուր ցանկացող կարող ե բանթղթակից լինել։ Բանթղթակիցը մի ընկեր ե, վորն ապրում ե բանվոր դասակարգի հետ, աշխատում ե նրա հետ միասին, վորը սիրում ե իր դասակարգը, լավ ծանոթ ե նրա կյանքի բոլոր կողմերին, ուշի ուշով հետևում ե այդ բանվորական կյանքի բոլոր շարժումներին և արտահայտություններին և սիրում ե հայտաքերել, յերեան հանել այն ամենը, ինչ-վոր մտածում ե, զգում ե բանվորական մասսան։

Իսկական բանթղթակիցը, առաջավոր բանթղթակիցը, հասարակական ջիղ ունեցող բանթղթակիցը չպետք ե գոհանա նրանով, թե ինքը գիտակցում ե, վոր թերթի միջոցով անհրաժեշտ ե ակտիվ մասնակցել իր պրոլետարական պե-

տության շինարարությանը։ Նա պետք է իր ցեխի, իր գործարանի բանվորներին—բանվորուհիներին դրդի կապվել թերթի հետ և այդ թերթի միջոցով՝ մասնակից լինի հասարակական կյանքին, մեր պրոլետարական պետության շինարարությանը։

Յեթե բանթղթակիցն իրեն շրջապատողներին, իր ընկերներին չի գրավում, չի դրդում մասնակցել նախ պատլրագրերին և ապա տպագիր թերթին, նա վատ բանթղթակից ե, նա միայն կիսով չափ բանթղթակից ե և նույնիսկ կարելի լի ասել բանթղթակից չե, այլ միայն թերթի թղթակից ե բանվորների շուրբերէց։ Ընկ. Բուխարինն իր հողվածներից մեկում շատ ճիշտ ե նկատել, թե այլ բան ե բանվորների շաբքերից դուրս յեկած թղթակիցը, այլ բան ե բանթղթակիցը։

Բանթղթակիցը պետք ե ակտիվ մասնակցի նաև իր թերթն կառուցելու, նրա բովանդակությունը կազմելու գործին։ Մեր մամուլն ուժեղ ե նրանով, վոր նա կապված ե մասսաների հետ մասսարական ե, իսկ մասսարական ե մեր մամուլ նրանով, վոր մեր թերթերը կառավարում են մասսաները, թերթերը գրում են մասսաների համար, իսկ գլխավորն այն ե, վոր մասսաները լցնում են նրանց եջերը իրենց թղթակցու-

թյուններով, իրենք են կառուցում նրանց բովանդակությունը և ուղղություն են տալիս նրան:

Բանթղթակցի, կազմակերպիչ բանթղթակցի, կառուցող, ակտիվ բանթղթակցի ոլորտականություն ե՝ զրել թերթում հենց թերթի մասին, նրա բովանդակության մասին և զրդել վոր մասսաներն ել նույնն անեն:

Անհրաժեշտ ե նաև, վոր բանթղթակցները ուշադրություն նվիրեն մամուլի տարածման խնդիրներին: Բանթղթակցները թերթին զրելով պետք է մտածեն նաև, վոր իր թղթակցությունը համարի իր նպատակին, մասնավորապես պետք ե աշխատի, վոր արդ թղթակցությունը կարդան: Ամեն մի ժիշ թե շատ գիտակից բանվորի, յեվ մանավաճդ բանբղբակցի պարտականությունն ե՝ տարածել մեր քերքերը, նոր ընթերցողներ գրավել:

### 6. ԽՆՉՈՒՍ ՊԵՏՔ Ե ՍՐՎՈՐԵԼ ԲԵՐԹՈՒՄ ԳՐԵԼ

Մենք արդեն ասացինք, վոր թերթում կարող ե զրել ամեն վոք, թե կիսազրագետ բանվորը և գյուղացին: Թերթում զրելու համար վոչ մի հատուկ ուսմունք չի պահանջում: Սովորել պետք ե, իհարկե, միշտ պետք ե սովորել

իր թղթակցությունների վորակը շարունակ քարձրացնելու համար։ Այստեղ պետք է նկատենք, վոր թղթակցության վորակը ասելով մենք ի նկատի ունենք վոչ թե նրա լեզուն կամ վոճը այլ թղթակցության բովանդակությունը։ Իհարկե հարկավոր և աշխատել լավացնելու լեզուն և վոճը, սակայն բանթղթակցի համար հարկավորն այդ չե։ Անհրաժեշտ ե, վոր թղթակցության մեջ պատմված լինի շոշափված հարցի ելության մասին և տվյալ բացերին այդ հարցն ամենակարևորը լինի։ Ընկ. Բուխարինը իր հոդվածներից մեկում ասում ե, թե բանթղթակցի համար կարենք այն չե, վոր նա գեղեցիկ գրի, իմանա թե վորտեղ պետք և դնել ստորակետը, միջակետը և այլն, այլ կարենք այն ե, վոր լավ ըմբռնի, մասսաների տրամադրությունը, շոշափի, հասկանա ալդ մասսաների մտածմունքներն ու զգացմունքները։ Թերթում մենք հանգիստ սրտով կղետեղենք անդրագետ լեզվով գրված մի թղթակցություն գործարանից—յեթե այդ թղթակցությունն արտացոլում ե մասսաների տրամադրությունը և ընդհակառակը, չենք զետեղի հղկած, մաքուր և լավ շարադրած, քերականության բոլոր կանոններով զրված մի թղթակցություն, յեթե նա չի արտահայտում տիրող տրամադրությունները։

Ինչպես պետք ե սովորի բանթղթակիցն ու գյուղթղթակիցը։ Ինչ պետք ե անեն նրանք սովորելու համար։

Առաջին։ Հարկավոր ե ակտիվ մասնակցել հասարակական կյանքին։ Բանթղթակիցները և գյուղթղթակիցները միմայն ակտիվ աշխատելով արտադրական հանձնաժողովներում, կոռպերացիալում և այլ կազմակերպություններում, կարող են արծարծել մամուլում ամենակարևոր և ամենահետաքրքիր հարցերը և իրենք ել կզարդանան ու կաճճն մուտավորապես։

Յերրորդ։ Անհրաժեշտ ե պարապել քաղաքական ինքնազարգացմամբ՝ աշխատել քաղաքիտական խմբակներում, ընթացիկ քաղաքականության խմբակներում և այլն։

Յերրորդ։ Պետք ե ակտիվ մասնակցություն ունենալ պատրագրում և թղթակիցների ժողովներին։ Այնտեղ ևս բանթղթակիցն ու գյուղթղթակիցը գործնական մեծ զարգացում կտանան։

Զորրորդ։ Հարկավոր են նաև ընթերցանությամբ պարապել։ Պետք ե կարդալ քաղաքական, արտադրական ու գեղարվեստական գրականությունից և իր բանթղթակցական գրականությունը։

Պետք ե սովորի վոչ միայն բանթղթակիցը

և գյուղթղթակիցը, այլև ամեն մի բանվոր, բանվորուհի, գյուղացի և գեղջկուհի։ Բանվոր դաստակարգը, վորը կառուցում և սոցիալիզմը աշխարհիս մի վեցերրորդ մասում, վորը պատրաստվում ե կորիգ մղելու՝ ամբողջ աշխարհի բանվորական գործի հաղթանակի համար, իր նպատակներին ավելի շուտ հասնելու, պետք ե լինի կուլտուրական, գիտակից, դարձացած։

## I. Ո՞Վ Ե ԲԱՆԹՂԹԱԿԻՑԸ ՅԵՎ ՎՈՐՈՇՔ ԵՆ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանվորական թղթակից կամ կրճատ՝ բանթղթակից ե դառնում պատլրազրին կամ տպագիր թերթին նլութ ուղարկող ամեն մի բանվոր։ Նրան վոչ վոք չի ընտրում, վոչ վոք ել չի նշանակում։ Նա կամավոր կերպով ինքնաբերաբար կարող ե զբաղվել բանթղթակցական գործով, ցանկացած ըռպեյին ել կարող ե թողնել։

Բանթղթակից ե նաև նա, ով անգրագետ կամ կիսազրագետ լինելով։ Իր գիտցածը հազորդում ե պատլրազրի կամ տպագիր թերթի վորեւ ներկայացուցչին։

Բանթղթակցի անելիքներն են՝

1. Մամուլի միջոցով նպաստել խորհրդակին և անտեսական ազարատի բարելավման, կուսակցական, արհմիութենական, կոռպերատիվ և

այլեայլ հասարակական կազմակերպությունների աշխատանքի կանոնավորման ու բարվոքման:

Այդ բոլորը հաջողությամբ կատարելու համար բանթղթակիցը պետք է լավ տեղյակ լինի, թե ինչ քաղաքականություն և վարուժ կուսակցությունն ավեայլ հարցերում (իսկ դրա համար պետք է միշտ թերթ կարդալ և ուշադրությամբ), միշտ քննել, թե այս կամ այն ձեռնարկության կամ կազմակերպության, հիմնարկության աշխատանքը համապատասխանում ե սոցիալիստական շինարարության հերթական խնդիրներին: Բանթղթակիցը մամուլի մեջ պետք ե լուսաբանի կազմակերպությունների, հիմնարկների, ձեռնարկությունների և առանձին անձնավորությունների սխալները, թերությունները, զեղծութերը, պարզի դրանց պատճառները և գործնական առաջարկներ անի այդ բացերը վերացնելու: Միևնույն ժամանակ, բանթղթակիցը պետք ե մատնանշի ձեռք բերված նվաճումները և բացատրի, թե ինչ ճանապարհով, ինչ միջոցներով ե ձեռք բերվել այս կամ այն հաջողությունը:

2. Բանթղթակիցը պետք է լուսաբանի բանվորների ու ծառայողների կինցաղը, նրանց դրական ու բացասական կողմերը, ցույց տա արտադրական և կենցաղային պայմանները բա-

ըելավելու ուղիները։ Նա պետք է դիտի, թե  
ինչ դրության մեջ և աշխատանքային կարգա-  
պահությունը, պարզի նրա թուլության պատ-  
ճառները և մատնանշի նրան բարձրացնելու մի-  
ջոցները. պետք է դրի աշխատանքի պաշտպա-  
նության, սոց-ապահովության և բանվորների ու  
ծառակողների կուլտուրական սպասարկման մա-  
սին։

Նա պետք է հաղըրդի այն ամենը, ինչ վոր  
հուզում է բանվորների միտքը, հետաքրքրում  
է նրանց, պետք է դրի, թե ինչ տրամադրու-  
թյուններ են նկատվում մասսաներում։

Կարևորն այն չե, վոր թղթակցությունն  
անպատճառ տպագրվի թերթում. խմբագրու-  
թյունը շատ անզամ առանց տպագրելու յել  
ովատագործում է ստացված նյութերը՝ հաճախ  
ավելի լավ և ուղարկել սոսկ ընկերական մի  
նամակ իր նկատած յերեսութիւն կամ տրամա-  
դրությունների մասին։

Ըստ ինքան հասկանալի յե, վոր թղթակի-  
ցը պետք է դրի միմիայն ճշմարիտը, միմիայն  
ստուգված փաստերի մասին։ Յեթե նա դրում  
է ուրիշ լսածը, պետք է մատնանշի, թե ով  
է հաղորդել նրա ավյալ փաստը, տեղեկությու-  
նը և թե ինքը վորքան ճիշտ է համարում այն։

3. Ամեն մի բանթղթակից պետք է աշխա-

աի, վոր մամուլը վորքան կարելի յէ շատ առաջածվի մասսաներում և բարձրանա նրա հեղինակությունը. պետք ե բացատրի բանթղթակցական աշխատանքի կարևորությունը և նոր ընկերներ ներդրավի այդ աշխատանքին:

Բանթղթակիցը պետք ե սերտ կապ պահպանի մասսայի հետ, պետք ե իրազեկ լինի ձեռնարկության մեջ պատող բոլոր «խոսակցություններին», «լուրերին», կարծիքներին, հասկանա, թե բանվորական վոր խմբակներն են հայտնում այս կամ ույն կարծիքը: Նա պետք ե աշխատի լինել զիտակից, առաջավոր բանվոր և բարձրացնի իր զարգացումը, պարապելով այլեայլ խմբակներում: Մերկոցնելով անկարգապահությունը, ծովությունը, անփութությունը, հարբեցողությունը և այն, նա ինքը պետք ե որինակ հանդիսանա ուրիշների համար, չպետք ե կատարի այն, վորի համար պախաբակում և ուրիշներին մամուլում:

## 2- ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԲԱՆԹՂԹԱԿԻՑ-ՆԵՐԸ

Բանթղթակիցները կազմակերպվում են պատրագրերի և տպագիր թերթերի շուրջը: Բանթղթակիցների կերտընական թերթն և «Рабоче-крестьянский Корреспондент»-ը:

Բանթղթակիցն իր առաջին, անմիջական և մշտական դեկագարը պետք ե համարի պատրագրի խմբելին և տպագիր թերթի խմբագրությունը։ Նա պետք և նախառաջ նրանց հետ կապ պահպանի և աջակցի նրանց աշխատանքին։

### 3. ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾԵԼ ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

#### ա) Ինչպե՞ս սկսել:

Պատլրագիր ստեղծելու նախաձեռնությունը կարող են ստանձնել մի խումբ բանվորներ և ծառայողներ կամ ձեռնարկության վորեկ կազմակերպությունը։ Նախաձեռնողները պատլրագիր ստեղծելու մասին պետք ե նախնառաջ համաձայնության գան կոմբջիջի բյուրուի կամ գործարկումի հետ, վորպեսզի նրանք հենց սկըզբից աջակցեն այդ գործին։ Պետք ե կապ հաստատել նաև տեղական տպագիր թերթերի խըմբագրության հետ և նրանցից ցուցումներ ստանալ։

Պատլրագիր հրատարակվելու մասին անհրաժեշտ ե հայտարարել բնիջի ժողովում, գործարկումի նիստում, բանվորների ընդհանուր ժողովում և այլն, ամենուրեք հայտարարություններ փակցնել, աշխատելով, վոր ձեռնարկության մեջ բոլոր բանվորներն ու ծառայողները տեղակ լի-

նեն պատլրողը հբատարակման և նրա նպատակներին:

Այսուհետև նախաձեռնողները պետք ե փող, թուղթ և սենյակ պահանջեն գործարկոմից՝ թերթը հբատարակելու համար, ապա մի խումբ ամենաակտիվ ընկերներ պետք ե կազմեն ժամանակավոր խմբագրական կոլլեգիա՝ խմբկոլ, հայտաբարեն, վոր բանվորները թերթի համար մի անուն առաջարկեն, առաջարկվածներից ընտրեն ամենալավը և ապա վորոշեն թե քանի որինակով պետք ե լույս տեսնի պատլրագիրը, վորպեսզի ձեռնարկության բոլոր բանվորներն ել կարողանան ոգտվել:

բ) Նյութ հավաքելը, գործին բանրդիթակիցներ գրավելը յեվ նրանց պատվանությունը.

Յուրաքանչյուր խմբկոլի ամենակարևոր խնդիրն ե բանվորներին բանթղթակցական աշխատանքին ներդրավելը: Ամեն մի ժողով պետք ե ոգտագործել բանվորներին և ծառայողներին բացառելու թե ինչի՞ մասին և ինչպե՞ս պետք ե նյութեր հավաքել, թղթակցությունն ուժ հանձնել և այլն. Ձեռնարկության ալլեալ տեղերում պետք ե կախ տալ նյութերի արկղներ համապատասխան մակագրությամբ: Մի վորոշեղ խմբկոլի անդամները պետք ե հերթապահություն սահմանեն անձամբ նյութեր ըն-

դունելու և գրել չիմացողներից թերթի համար ըերանացի այս կամ այն տեղեկությունը ստանալու նպատակով։

Խմբկոլի անդամները և ակտիվ բանթղթակիցները պետք եւ մտնեն գործարան, խոսեն բանվորների կարիքների և կյանքի մասին, բանվորների պատմածից հոգվածներ կազմեն։

Կարելի յե նաև հատուկ խորհրդակցություններ հրավիրել այս կամ այն հրատապ հարցի մասին և նյութն ոգտագործել պատրագրի համար։

Ամենայն խնամքով պետք եւ գաղտնի պահել կեղծանունով գրող բանթղթակիցների իսկական անունը։ Կեղծանունները մերկացնողը որենքով խիստ պատասխանառվության և յինթարկվում։

գ) Պատրագի հիմնական խնդիրը.

1. Պատրագիրը պետք եւ լուսաբանի ձեռնարկության կամ հիմնարկի ամենասուր, հրատապ հարցերը բանվորական կյանքի ամենակարևոր յերեսույթներն ու փաստերը, կապելով դրանք կուսակցության հերթական լոգունգների հետ։

2. Անհրաժեշտ եւ լուսաբանել տեղական կազմակերպությունների աշխատանքը։

3. Մշտապես լուսաբանել ընդհանուր ժո-

ղովաների, արտադրական խորհրդակցությունների ժողովաները և միջոցներ ձեռք առնել ընդունված վորոշումները կենսագործելու:

4. Մինչև իր վախճանին հասցնել թերթում սկսված յուրաքանչյուր դործը և պայքար մղել վոր հոդվածները վորոշ արդյունք տան:

դ) Ինչպես կազմել ներքական համարի պլանը.

Հերթական համարի նախնական պլանը կազմելու համար, պետք է հաշվի առնել, թե տվյալ որերին ինչ խնդիրներ ե առաջադրել արտադրական, կուսակցական և արհմիութենական կյանքը, այդ այժմեական խնդիրներից և բանվորներին հուզող «հրատապ» հարցերից ընտրել ամենակարևորները, ամենասուր ընույթ կրող հարցերը:

յԵ) Թղթակցությունների ընտրությունը յեկ ուղղումը.

Պատրադրում կարելի է զեսեղել այն հոդվածները, վորոնք հասարակական նշանակություն ունեն, հետաքրքիր են բանվորների ու ծառայողների լայն մասսաների համար և կարող են բարելավել իրականությունը:

Ընտրվածների մեջ կլինեն հոդվածներ, վորոնք անհրաժեշտ ե ուղարկել ստուդենտ և քննություն կատարելու:

Հողվածներն ընտրելուց հետո, պետք է դրանք ուզել: Յեթե վորոշ թերություններ լւսաբանող մի հոդվածում չի մատնանշված, թե ինչպես պետք է ուղղել այդ թերությունները, կամ նվաճումները, նկարագրելիս չի ասված թե ինչպես են ձեռք բերվել այդ նվաճումները, խմբելով պետք է հրավիրի հեղինակին և առաջարկի լրացնել իր հոդված: Նույնպես պետք է վարվել, յերբ հոդվածում բացակայում են փաստեր: Յեթե հոդվածուր չե հրավիրել հեղինակին, խմբելով ինքը պետք է մացնի լրացումները:

Հոդվածից պետք է ջնջել անհիմն տեղեկությունները, անտեղի վիրավորական խոսքերը, այս մասերը, վորոնք արդյունք են առ ձնական հաշիվների և այն, վորովինեակ դրանք վարկարեկում են պատրագիրը:

զ) Ինչպես պետք է կապել (կազմել) համարը.

Տվյալ համարի «առանցքը», նրա ամենակարևոր մասը կազմելու համար ընտրվում են 2-3 ամենահետաքրքիր հոդվածներ, վորոնք զետեղվում են աշքի ընկնօղ տեղում՝ լոգունդներով, նկարներով և ցայտուն վերնագրերով: Համարի այդ «առանցքը» ել պետք է համապատասխանի խմբագրականը, վորտեղ պետք է ամփոփված, մեկնաբանված լինի նույն հարցը:

Այնուևնեան համարում պետք ե գասավորել  
մացած նորութերը, խուսափելով միապաղադ  
վերնագրերից, միորինակությունից:

Թերթը նկարագորդելու, կարիկատուրաներ  
զետեղելու համար սկզբից պետք ե հրավիրել ինք-  
նուս նկարիչներ, լուսանկարիչներ ձեռնարկու-  
թյան բանվորներից ու ծառալողներից: Թերթը  
պետք ե լույս ընծալել շաբաթը մի անգամ և  
կախ տալ ամենից ավելի տշքի ընկնող տեղում:

Պետք ե աշխատել շարունակ կատարելա-  
գործել տալ պատլրագիրը. դրա համար նկատի  
առնել ընթերցողների քննազատությունը, դի-  
տողությունները, կազմակերպել զատեր, ան-  
կետներ, ընթերցողների ժողովներ. ուանել օրն-  
թերցողների ցանկությունների» մատյաններ և  
այլն, կապ պահպանել տեղական տպագիր թերթի  
խմբագրության հետ:

#### 4 ԽՄԲԿՈԼԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատլրագրի խմբելով ընտրվում ե մի տա-  
րով ընթերցողների ընդհանուր ժողովում, վորի  
մասին նախապես պետք ե լոյն հայտարարել  
ամենուրեք, թե զրավոր և թե բերանացի:

Խմբկոլը նայած ձեռնարկության մեծության  
և ընթերցողների թվին, բաղկացած ե լինում  
ծից մինչև 11 հոգուց: Նա իրավունք ունի

ողալը ագրի ալս կամ այն աշխատանքը կատարելու համար հրավիրել նաև առանձին ընկերներ բանթղթակցական ակտիվից։ Արդյունաբերական ձեռնարկություններում խմբկոլի անդամների մեծամասնությունը պետք է կազմեն դադոյտի բանվորները։

Խմբկոլի պարտականություններն են՝

1. Կազմել և հրատարակել պատրագիրը, նյութեր հավաքել, մշակել ստացված նյութերը, սուսպել վոչ պարզ փաստերը և այլն։

2. Կազ պահպանել վարչության և տեղական կազմակերպությունների հետ։

3. Պարք որ մղել, վոր հոգվածներում շոշափված հարցերը լուծում ստանան, արդյունք տան։

4. Կազմակերպել կրթական դասախրակչական աշխատանքը բանթղակիցների համար (ժողովներ, զեկուցումներ, ինքնազարդացման խմբակներ, բանզուղթղթակցական գրականություն և այլն)։

5. Մասսարական աշխատանք ստեղծել ողալը արքերի շուրջը (ընթերցողների ժողովներ, դատեր, ցուցահանդիսներ և այլն)։

6. Մտանձնել գյուղթղթակիցների շեֆությունը։

7. Կազ ժակերպել բանթղթակիցների միջազգային կազը։

8. Պաշտպանել բանթղթակիցներին հայածանքներից, միջնորդել տուժողին նյութական ոգնություն հասցնելու մասին.

9. Հաշվառման իննթարկել պատրագրի ամբողջ աշխատանքը, նյութերը, բանթղթակիցներին:

Խմբկոլի անդամների աշխատանքի և պատրագրի բովանդակության համար պատասխանատու յե խմբկոլի ամբողջ կազմը:

Խմբկոլն ընտրում ե մի նախադահ, վորի պարտականություններն են՝ հետամուտ լինել, վոր խմբկոլն աշխատի վորոշ ծրագրով, պլանով. վոր յուրաքանչյուր անդամն անպայման կատարի ստանձնած պարտականությունները, վոր կատար ածվեն բոլոր վորոշումները, հանձնարարությունները. նա յե հրավիրում ժողովները կապ ե պահպանում մյուս կուղմակերպությունների հետ և այլն:

Խմբկոլի մյուս անդամներից ամեն մեկը ստանձնում ե մի առանձին աշխատանք, իսկ նյութերը հավաքելու, ուղղելու և ընտրելու գործը կատարում են բոլոր անդամները միասին, վորով կարելի յե տեղն ու տեղը ստանալ անհրաժեշտ բացատրությունները և լրացնենք:

Վիճելի թղթակցություններն ընդունելու

հարցը վճռվում ե քվեարկութիւնը: Զընդունվելու պատճառը պետք է հայտնել հեղինակին:

Խմբիոլի ժողովները պետք ե տեղի ունենան շաբաթը մեկ անգամ:

Նոր ընտրություններից առաջ նախկին խմբիոլը պետք ե հաշիվ տա իր գործունելության մասին, նախապես փակցնելով հաշվետվության նյութերն աչքի ընկնող տեղում:

Հաշվետու ընտրական ժողովից առաջ պետք ե կազմակերպել մասսայական աշխատանք՝ դատ պատի լրապրի դեմ, հարցի ու պատասխանի յերեկոներ, անկետ և ալին. Այդպիսով հավաքված նյութերը, վորոշ լրացումներով պետք ե ծառայեն վորպես հրահանգ (նակազ) ժողովում:

## 5. ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԿՈԼԻ ԿԱՊԸ ԿՈՄԲՁԻՉԻ ՀԵՏ

Բանթղթակիցներից ամեն մեկը և նրանց կողեկանիվ նախ և առաջ պետք ե աշխատեն կապ հաստատել կոմբջիջի հետ, առանց վերջինիս ոգնության բանթղթակիցները չեն կարող կատարել իրենց հիմնական պարտականությունները՝ նպաստել սոցիալիստական շինարարությանը: Բանթղթակիցը, առանց կուսակցության դուցումների և դեկավարության, կղժվարանահասկանալ, թե վեր ձեռնարկումներն են ոգտա-

կար մեր շինարարության, համապատասխանում  
են բանվոր դասակարգի հերթական խնդիրնե-  
րին, և վորոնք են խոչընդոտ հանդիսանում դը-  
րանց իրականացման։ Նրանք պետք ե ծանու-  
թանան կուսակցության քաղաքականության հետ,  
այս կամ այն հարցում կուսակցության վարած  
գծի հետ (թեթերի ընթերցանությամբ, կուս-  
ռչիչների դոնքաց ժողովներին ալցելելով և այլն)։

Կուսքջիշներն ել իրենց կողմից պետք ե  
ակտիվ կերպով ղեկավարեն պատրագրերը, վո-  
րոնք հզոր միջոց են, մասսաներին, կուսակցու-  
թյան շուրջը կազմակերպելու։ Սակայն կուս-  
ռչիջը հրամայողի, գրաքննիչի գեր չպիտի կա-  
տարի պատրագրի և նրա աշխատակիցների  
նկատմամբ, այլ ցույց տա ընդհանուր քաղաքա-  
կան ղեկավարություն և աշակցի այն բոլոր աշ-  
խատանքներին, վորոնք բղխում են պատրագրի  
խնդիրներից և նպատակներից։

## 6. ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ

ՀԱՄԿԽ-ի 27 թ. հուլիսի 5-ի դիրեկտիվի հա-  
մաձայն, պրոֆկազմակերպությունները պետք ե  
աջակցեն ստեղծելու այնպիսի պարմաններ, վոր  
ապահովվի ազատ ինքնաքննադատությունը  
թերթերում։

Նրանք պետք եւ վճռաբար աշխատեն պատը աղորեց և բանթղթակիցներին, վորոնց զեմ ուղղված հալածանքները պետք եւ համարեն ամբողջ ոլրովի աղմակերպության գործը։ Պըոֆմիություններն, ոգտագործելով ԽՍՀՄ-ի ժՏԳԽ-ի 1926 թ. մայիսի 28-ի հրամանը (պատլրագրեցի հոդվածների առթիվ արգելիք պատասխանների մտախն)՝ պետք եւ աժեն կերպ աշխացեն խըմբեկուններին և բանթղթակիցներին՝ գործնական ոգտասխաններ ստեղծելու իրենց հոդվածների առթիվ։

Գործարկումն իր ամբողջ գործունելությունը պետք եւ սերտորեն կապահցի պատլրագրի աշխատանքի հետ, լուսաբանի իր աշխատանքը պատլրագրում, աշխատի առանց ուշացնելու կենսագործել բանթղթակիցների առաջարկները՝ արտադրական խոշնրգությունների և հանձնաժողովների գործունելության մտախն և այլն։

Պըոֆկաղմակերպության կարևորագուն պարագանությունն եւ համազատասխան սենյակ և միջոցներ ապահովել պատլրագրի աշխատանքի համար։ Նյութական միջոցները պետք եւ նախատեսնքած լինեն գործարկումի նախահաջուռ։ Բնդիանուր կուլտֆոնդից պետք եւ վորոշ հաստատուն տոկոս հատկացվի բանթղթակիցական աշխատանքի համար։

Խ ՅԲԿՈՂԻ անդամներին պետք եւ աղատել  
պրոֆմիութենական աշխատանքներից:

## 7. ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Յուրաքանչյուր խմբկոլ և բանթղուկից ողեաք  
եւ գիտակցի, վոր իր պատրազըի նպատակն եւ  
վոչ թե կոիվ մղել վարչության դեմ, նրա հետ  
հաշիվ տեսնել, այլ վարչության հետ միասին հա-  
մառորեն աշխատել բարելազելու արտադրու-  
թյունը և աշխատանքի պայմանները. պատրա-  
գրերը և տնտեսավարը, տարբեր ճանապարհով,  
միևնույն խնդիրն են իրականացնում:

Բանթղթակցի և պատրազըի խնդիրն եւ  
անվրդով, ազդու յեղանակով մատնանշել իր նը-  
կատած սխալը և ոգնել այդ սխալն ուղղելու:  
Բացահայտ զեղծում նկատելիս, բանթղթակիցը  
պետք եւ հանդես դա ամենայն վճռականությամբ,  
անհերքելի ապացուցներով։ Վորքան ավելի  
հիմնավորված և գործնական լինի բանթղթակցի  
յելույթը, այնքան ավելի կրաքարանա թերթի  
հեղինակությունը վարչության աշքում։

Ցերբ բանթղթակցիցը բացի սխալներից ու-  
շադրություն դարձնի նաև իրական նվաճում-  
ների վրա, այդ ևս կնպաստի փոխհարաբերու-  
թյունների կօնոնավորելուն, սակայն ամենա-

լավ ուղին միատեղ խորհրդակցություններն են, վորտեղ վարչությունը ծանոթանում է իր ծրագրած ձեռնարկումների մասին, հայոնում և թե ինչ աջակցություն և սպասում պատլրագրից և ինչ կարծիք ունի վերջինիս աշխատանքի մասին, խմբելոն ել իր հերթին առաջարկներ և անում պատլրագրին աջակցելու, բանվորների առաջարկները կատարելու և բանթղթակիցներին պաշտպանելու մասին:

Նույնպիսի կազ պետք է հաստատել նաև վարչական-տեխնիկական ստորին կազմի հետ (որինակ՝ վարպետների հետ):

## 8. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՆՎԱԶՈՒՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոգվածներից արդյունք ստանալու համար, խմբելու պետք է հաշվարկի այն հոգվածները, վորոնց առթիվ ոլետք և պատասխան ստացվի և միջոցներ ձեռք առնվեն:

Խմբելոններին կից պետք է ստեղծել նվաճումների բյուրո, վորի կազմի մեջ, բացի խըմբեկոլի ներկայացուցիչ (վորը բյուրոյի նախագահը պետք է լինի), ստանում են պատասխանատու ներկայացուցիչներ՝ վարչությունից, կուսակցական և կոմյերիտական բջիջներից, գործարկումից, խորհրդի տեղական պատգամավորը և ԲԳԾ

սեկցիայի անդամները։ Պատլրազրի նվաճումների բյուշոն պետք է կազ հաստատի տեղական ընդհանուր զեկավարող թերթի համապատասխան բաժնի հետ (նվաճումների բյուրո, հետաքննության բյուրո և այլն) և իր աշխատանքի համար ոգտագործի ալդ բաժնի փորձն ու ցուցումները։

Նվաճումների բյուրոյի հիմնական խնդիրներն են՝

1. Հետազուտ լինել տեղական և ընդհանուր թերթերում զետեղված հոդվածների առթիվ պատասխաններ ստանալու, պայքարել պատասխանների ուշացման դեմ, վոչ ըստ ելության, ձևական պատասխաններ արվելու դեմ։

2. Այն հարցերը, վորոնց պատասխանն ուշացվում են, առաջադրել համապատասխան կազմակերպությունների ժողովներուն և նիստերուն (վարչություն, կուսըջիջ, գործարկում և այլն)։

3. Ստուգել բանթղթակիցների և պատլրազրի առաջարկների հատարաւմը։

4. Դատախազության միջոցով պատասխանատվության կանչել լրադրում մերկացված, կամ ստահող պատասխան ավող անձանց և կազմակերպություններին։

5. Հաշվարեկել և հրապարակել, հոդվածների շնորհիվ ձեռք բերված նվաճումները։

Բաւրոն հաշիվ եւ տայիս այն կազմակերպություններին, վորոնք ներկայացվուծ են իր կազմում։ Նա պարբերութար զեկուցումներ եւ տալիս խմբելին նիստերում, բանթղթակիցների և ընթերցողների ժողովներում։

### 9. ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍԻԱՐԾԿՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Այդ աշխատանքի հիմնական ձևն են գրողների պարբերական ժողովները, վորոնք հրավիրում եւ խմբելու։ Ժողովներում բանթղթակիցներին պետք է բացատրել բանվոր դասակարդի քաղաքական կուլտուրական խնդիրները, սովորեցնել նրանց իրազեկ լինել տեղական մասնավոր հարցերում։ Հիմնվելով կուսակցության վրա, Ահա այդ ժողովներում նւառմասիրվում են պատրագրի և բանթղթակիցների կոնկրետ խնդիրները, բացատրվում են պատրագրի և բանթղթակցի դերը պրոլետարիատի կրանքի բոլոր ասպարեզներում։ Ամսն մի ժողովի վերջում պետք է կոնկրետ ոլլան մշակվի, թե ինչպես պետք եւ մասնակցեն պատրագրերը և բանթղթակիցն այս կամ այն հարցի լուծման։ Ժողովում քննվող յուրաքանչյուր հարցի մեկնաբանման համար պետք է հրավիրել այդ հարցում իրազեկ լավ պատրաստված ընկեր։

Բացի դրանից խմբկոլը ժամանակ առ ժամանակ պետք եւ գումարի գրողների և ընթերցողների ավելի լայն ժողովներ, վորտեղ պետք եւ ըննարկվեն խմբկոլի կատարած աշխատանքը և նրա հեռաւնկարները:

Ժողովներում պետք եւ կարդացվեն նաև ղեկավարող թերթի հրահանգչական ցացմունքները, բանթղթակցական խորհրդակցությունների վորոշումները, նվաճումների բյուրոյի աշխատանքը և այլն:

Այս աշխատանքը պետք եւ կատարել անկախ ներկա յեղողների թվից, սակավամուրդության, կամ զեկուցողի չգալու պատճառով:

Ամեն մի ձեռնարկության մեջ պետք եւ ունենալ մամուլի անկյուն, վորտեղ կարելի յեզրուցներ կազմակերպել, թե ինչ և ինչպես պետք եւ գրել թերթում:

Խմբկոլը, կուսրջիջի և գործարկումի հետ միասին, պետք եւ տեղավորի բանթղթակիցներին այլ և այլ քաղգրագիտական դպրոցներ, յերեկոյան կամ կիրակնորյա դասընթացներ, մտցնի նրանց մարքսիստական և ինքնակրթական այլ խմբակներ:

Բանթղթակիցն ել իր կողմից պետք եւ սիստեմատիկար պարապի ինքնակրթությամբ, կարդա թերթեր և բանթղթակցական ղեկավարող ժուրնալներ:

Տպագիր թերթի խմբագրություններն ել կուսակցական կոմիտեյի հետ միասին, պետք է սլարքերաբար կազմակերպեն դասընթացներ և սեմինարիաներ։

## 10. ԽՄԲԿՈԼԻ ՅԵՎ ԲԱՆԹՂԹՍԿԻՑՆԵՐԻ ՄԱՍ- ՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բանթղթակցական շարժումն ըստ ինքյան արդեն մի զորեղ միջոց ե մասսաներին մեր սոցիալիստական շինարարությանը մամնակից դարձնելու, նրանց կուլտուր-քաղաքական դաստիարակություն տալու։ Այնուամենայնիվ, պատրագի շուրջն աշխատողները, համապատասխան կազմակերպությունների հետ միասին, պետք ե կատարեն նաև հատուկ ռմասսայական աշխատանք»։

Այդ աշխատանքի գլխավոր ձևերն են.

1) Ըսթերցողների և բանվորական առանձին խավերի ու կատեղորիաների ժողովները, վորանց նպատակն ե՝ թերթի աշխատանքը գընահատելու, նոր բանթղթակիցներ ներդրավելու և թերթի համար հետաքրքիր, կենդանի նյութեր հավաքելը։

2) Դատ կազմակերպել պատլրագրի դեմ, վորը կարելի յե կապել այն աշխատանքի հետ, վոր կատարել ե պատլրագիրն այս կամ այն

կտմպանիան անցկացնելու համար. հետաքրքիր կլինի նաև կազմակերպել ագիտ դառ թերթում չղրող բանվորների դեմ և ալին.

3) Արտադրական քննություններ պատրը-րագրում, վորանք պետք ե կատարել վոչ թեամ-քողջ արտադրության ասպարիզում միանգամից, այլ առանձին-առանձին ճյուղերում, ցեխերում, աշխատանքի տոանձին բնագավառում, նախա-պես լավ պատրաստվելով (առանձին հանձնա-ժողով) թերթն ավելի հաճախ լույս ընծայելով և քննությունն իր վախճանին հասցնելով:

4) Մրցություններ պատրագրում՝ լավա-գույն վարպետի, կարեոր թերթություն մեջկաց-նող կարիկատորի համար, գործարքումներով, հարբեցողությամբ, աչքի ընկնող բանվորի հա-մար և ալին:

Բացի դրանցից, պետք ե աշխատել մաս-սայական աշխատանքի միշտ նորանոր ձևեր գըտ-նել:

## 11. ԽՄԲԿՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆԹՂԹԱԿՑԱԿԱՆ ՄԻ- ԶԱԳԴԱՅԻՆ ԿԱՐԻ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Ոտարյերկրյա բուրժուազիան իր և սոցիալ-դ' մոկրատական թերթերում որ ավուր զրակար-տում ե Խորհրդային Մրությանը, կեղտ ու մուր ե թափում մեր սոցիալիստական շինարարու-

թիան վրա Բուրժուազիայի ալդ ստահոդ ին-  
ֆորմացիայի գեմ պալքարելու համար, արտա-  
ստահմանյան բանվորներին ու կոմմունիստական  
կուսակցութիւններին անհրաժեշտ ե բանթղթակից-  
ներից սահմանականությունը իրականությունը  
լուսաբանող նամակներու նամակներով պարբե-  
րաբար լուսաբանել ծեռնարկության, հիմնար-  
կութիւնն, գլուղի կյանքը, շինարարությունն ա-  
ռանց ծածկելու դժվարությունները:

Մյուս կողմից խորհրդացին բանվորներին  
անհրաժեշտ ե տեղեկություններ ստանալ ոտար-  
յերկրյա բանվորներից՝ նրանց կյանքի և պայ-  
քարի մասին:

Ինչպես ե կատարվում նամակների ալդ փո-  
խանակությունը:

Արտաստահման նամակ ուղարկել ցանկացող  
ամեն մի բանվոր պետք ե զրի այն հարցերի մա-  
սին, վրանք հետաքրքրում են արտաստահման բան-  
վորներին: Թե ինչպիսի հարցեր են զրանք՝  
կարելի լե իմանալ տպագիր թերթի խմբագրու-  
թյունից: Իր զրած նամակը բանվորն ուղար-  
կում ե տպագիր թերթին, ծրարի վրա մակա-  
գրելով, թե նամակը «արտաստահմանյան» բան-

թղթակիցների համար եւ: Խմբագրությունն ալդ  
նամակը կուղարկի արտասահման՝ կոմմունիս-  
տական գորեն թերթի:

Բանթղթակցական միջազգային կառի աւ-  
պարիզում խմբեկություններ տա միջազգային կա-  
ռի մասին, բացատրի, թե ինչպես պետք ե գը-  
րել արտասահման:

2) Կազմակերպի արտասահման կոլեկտիվ  
նամակներ ուղարկելու դորձը:

3) Տպագիր թերթից ստանալով հերթական  
թհմաներ, գետեղի պատրագրում:

4) Զետեղի պատրագրում արտասահմանի  
բանկըներից ստացած նամակները:

Նամակագրությունը զարգանալուց, սիստե-  
մատիկ բնույթ ստանալուց հետո, կարելի յե-  
տքյալ ձեռնարկությունն ամրացնել արտասահ-  
մանի վորեն ձեռնարկության:

## 12. ԻՆՉՊԵՍ ՆԵՐԴՐԱՎԵԼ ԿԱՆԱՑ ԲԱՆԹՂԱԿՑԱ- ԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Պարբերաբար գումարելով կին բանթղթա-  
կիցների և կին ընթերցողների ժողովներ, քըն-  
նության առնել, թե վորքան և բավարարում  
պատրագիրը կին ընթերցողների կարիքները,

նրանց արտադրական-կենցաղալին և կուլտուրական պահանջները:

Պատրիարքութ պետք ե միշտ հողվածներ զետեղել կանանց իրավական պաշտպանության, յերեխաներին խնամելու մասին։ Պետք ե զետեղել տնտեսական և բժշկական խորհուրդներ և այլն։

Պատրիարքութ հետաքրքրվող ակտիվ բանվորուհիներին պետք ե ընտրել խմբկոլի անդամ, կռապատցիալի կարգով հրավիրել աշխատանքի և հանձնարարել նրանց կանանց հետաքրքրող նյութերի ընտրությունը, բանվորուհու անկյունի և թերթերի կազմակերպումը և այլն։

Բանթղթակցական խորհրդակցությունների համար պատգամավոր ընտրելիս նրանց մեջ մըտցընել նաև ակտիվ կին-բանթղթակիցներ, վորոնք պետք ե զեկուցում տան բանվորուհիների պատգամավորական ժողովներում՝ խորհրդակցության արդյունքների մասին։

### 13. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Բանվոր լերիտասարդության լայն չափով ներգրավելու համար անհրաժեշտ ե հաշվի առնել նրա առանձնահատկությունները և շահերն արտադրության մեջ (արտադրական ուսմունքի, վորակավորման, Փարգործութի հարցերը, յերի-

տասարդության և հին բանվորների փոխարաբերությունը նախաձեռնող խմբակների աշխատանքները՝ ուսցիոնալացման ասպարիզում և այլն). Անհրաժեշտ ե հաշվի առնել լերիտասարդության առանձնահատկություններն ու շահերը նաև կենցաղի ասպարիզում (ուսմունքի, կուլտուրական հանգստի, նոր կենցաղի, լերիտասարդության հանրակացարանների և կոմմունաների, ակմբի պատահելական սեկցիաների, ֆիզկուլտուրայի և այլն) հարցեր։

Բանվոր յերիտասարդությունը ձգտում է հանդես գալ հասարակական աշխատանքի ասպարիզում, ակտիվ և ինքնուրույն կատարելով նրան հանձնարարած գործը։ Յերիտասարդությունը բնորոշ ե, վորպես բանվորության ամենաճկուն, զգայուն և մարտական խավը։

Պատրագրի խմբելուները պետք ե հաշվի առնեն յերիտասարդության առանձնահատկությունները և կիրառեն յերկու հիմնական միջոց։

1) Պետք ե արծարծել պատրագրերում այնպիսի հարցեր, վորոնք հետաքրքրուս և հուզում են յերիտասարդությանը։

2) Մասնակից դարձնել լերիտասարդությանը այն հարցերի առաջադրումն և լուծման։

Յուրաքանչյուր պատրագրում պետք ե մըշտական անկյուն, սյունյակ հատկացնել լերիտա-

սարդության համար։ Այդ անկլունը խմբագրեց համար խմբկոյն ընտրում ե յերիտթղթակից յերիտասարդ սի ըառվոր, ամենալավն ե խմբկուից։ Այդ ընկերը յերիտակումքի շուրջը համախմբում ե կազմակերպում ե յերիտթղթակիցներին և յերիտասարդ ը թերցողներին։ Նրանց ժողովներում նշվում են թեմաներ հերթական համարի համար և կոլեկտիվ կերպով քննութեական հնութեարք։

Ընդունված նլութերը հանձնվում են պատրագի խմբիսին, վորը վերջնականացես քըննում ե զրանք և զետեղում ե հերթական համարում։ Ընհրաժեշտ ե, վոր խմբկոյն սմեն հընարավություն տա յերիտասարդությանը՝ իր ինքնազործունելությունը զարգացնելու, չպահի նլութերը, ապահովի յերիտանկյան կանոնավոր լույս ընծայումը։

Արտազրության կից պատրագի խմբկոլը չպետք ե սպասի, վոր յերիտասարդությունն ինքը վորեե հարց առաջադրի, այլ իր այն ներկալոցուցչի միջոցով, վորին հանձնարարված ե աշխատանք կատարել յերիտասարդության շարքերում, պետք ե առաջադրի յերիտասարդության վերաբերյալ հարցեր, ըննության դնի այդ հարցերը, վիճաբանություններ բանա դրանց շուրջը և գործնական առաջարկներ անել տա։

Պատլրագրի յերիտանկան շուրջն անհրաժեշտ ե աշխատանք ծավալել յերիտասարդական մասսաների շրջանում, պետք ե համախմբել վոչ միայն պատանի թղթակիցներին, այլև յերիտասարդության առանձին խմբակներին (յերիտասարդ գյուտարարներին, լավագույն արտադրական յերիտասարդ բանվորներին, տկարիվ կոմիտականներին, Փիզկուլտուրնիկներին, Փարզործուսի աշակերտաներին, գրքի սիրողներին և այլն) և քննության առնի այն հարցերը, վորոնք կապված են յերիտասարդ բանվորների նաև ձեռնարկության մեջ կատարած հասարակական և կուլտուրական աշխատանքի հետ:

Նպատակահարմար ե կազմակերպել դատեր յերիտասարդ գործալիքների գեմ, Փաբրդործուսի լավագույն աշակերտների մրցության դիսպուտներ յերիտասարդության հանգիստը կազմակերպելու շուրջը և այլն:

Հատուկ ուշադրություն պետք ե նվիրել կոմյերիտմիության աշխատանքին: Պետք ե առաջադրանքներ անել, թե ինչպես լավացնել կոմյերիտական աշխատանքը, ինչպես մասնակից դարձնել բոլոր կոմյերիտականներին ձեռնարկության հասարակական կյանքին, պետք ե առաջադրանքներ անել կոմյերիտմիության այն աշխատանքի ձևերի մասին, վար բղխում ե վերջին համագումարի ձևերից և այլն:

Պատլրագրի խմբկոլը յերիտասարդներին  
պետք ե մասնակից դարձնի նաև ձեռնարկու-  
թյան կյանքի ընդհանուր հարցերի քննությանը,  
մասնակից դարձնի քաղաքական խոշոր այն կամ-  
պանիաներին, վոր մղում ե պատլրագիրը։ Յե-  
րիտասարդությանը պետք ե գրավել բանթղթա-  
կիցների ընդհանուր ժողովներին և բանվոր ըն-  
թերցոնների կոնֆերենցիաներին։ Հարկավոր ե  
ոգտագործել յերիտասարդության ակտիվությու-  
նը, հանձնարարելով առանձին յերիտթղթակից-  
ներին շրջել և հարց ու փորձ անել բանվորնե-  
րին՝ խմբկոլի անունից։ Այդպիսով յերիտասար-  
դությունը կարող ե ոգնել խմբկոլին և կմաս-  
նակցի պատլրագրի ամրող աշխատանքին։

Այն գեպքերում, յերբ յերիտասարդության  
ակտիվությունն աճում ե և նրան այլես չի բա-  
վարարում ընդհանուր պատլրագրի յերիտանկու-  
նում իր կատարած աշխատանքը, խմբկոլը պի-  
տի ընդառաջի նրան և ոգնի կազմակերպելու և  
լույս ընծայելու ինքնուրույն թերթ յերիտասար-  
դության համար։ Զնալած յերիտասարդական  
թերթերի գոյության, յերիտասարդության վե-  
րաբերյալ կարե՞րագույն հարցերը պետք ե լու-  
սաբանվեն նաև արտադրության ընդհանուր թեր-  
թերում, վարպեսզի այդ հարցերի վրա կենտրո-  
նանա բանվորական ամրող մասսայի ուշադրու-

թիունը։ Ընդհանուր և յերիտասարդական թեր-  
թերի խմբելուները պետք ե կազ պահպանեն և  
պարբերաբար գումարեն միացյալ նիստեր, մի-  
ասին մղեն լրագրային կարեւրագույն կամպա-  
նիաները, ինչպիսիք են՝ արտադրական ստու-  
գատեսները, մամուլի որն և այլն։

#### 14. ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՊԸ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑ- ՆԵՐԻ ՀԵՏ

Ներկայումս առանձնապես անհրաժեշտ ե  
ուժեղացնել շեֆական աշխատանքը գյուղքիթա-  
կիցների նկատմամբ, բանթղթակցական կազմա-  
կերպությունը պետք ե մշտական կազ հաստա-  
տի շեֆարկյալ գյուղքիթակիցների հետ, տեղա-  
կան շեֆկազմակերպության միջոցով։ Կապի ղե-  
կավարությունը պետք ե հանձնարարել հա տուկ-  
ընկերոջ։

Կապի համար պետք ե ոգտագործել շեֆ-  
ընկերության ուղեղորությունները դեպի գյուղ,  
փոխանակել պատրապիրը, նամակագրություն-  
հաստատել, գումարել բանթղթակիցների և գյուղ-  
թղթակիցների ընդհանուր ժողովներ և այլն։

Կապը պետք ե կենսագործել հետեւալ մե-  
թողներով։

1) Անձամբ գյուղ մեկնելով հետազոտել  
գյուղի պատրագը և գյուղթղթակիցի աշխատան-

քը: զյուղթղթակիցների հետ միասին կազմելաշ-  
խատանքի ծրադիր:

2) Կազմակերպչական ոգնություն ցուց  
տալ զյուղի խմբկ լին՝ զյուղթղթակիցների և ըն-  
թերցողների շրջանում կատարվող աշխատանքի  
առաջարիդում:

3) Գյուղթղթակիցների համար բերել տալ  
համապատասխան գրականություն, թերթեր, ոգ-  
նել ողառլրազրի համար թուղթ, ներկ և առար-  
կաներ ձեռք բերելու:

4) Ազնել զյուղի խմբկուին՝ ներգրավելու  
պատի լրագրի աշխատանքին զյուղթղթակիցների  
չքավոր, միջակ խավերին (ժողովներում, զրուց-  
ների միջոցով):

5) Կազմակերպել զյուղ և բանթղթակիցնե-  
րի զողման յերեկոներ:

6) Ազնել բանթղթակիցներին հալածելու  
գեմ զյուղի խմբկուի մղած ոլայքարին:

7) Աշակցել զյուղթղթակիցին՝ կազ հաստա-  
տելու տպագիր թերթերի և բանզյուռեղթղթակցա-  
կան ժուրնալների հետ:

8) Նպաստել զյուղացիական մասսաների  
մեջ թերթեր և ժուրնալներ տարածելու:

Գյուղթղթակիցների հետ կապն ընդարձա-  
կելու համար ցուցումներ տալ զյուղ ուղերժվող  
զորացրված բանթղթակիցին՝ զյուղի պատլըտ-

գրին աջակցություն ցուց տալու մասին և ապա  
լսել նրա զեկուցումը կատարված աշխատանք-  
ների մտածին:

### 15. ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵՆ ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ ՍՈՑԻԱ- ԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

Սոցիալիստական մրցությունը մեր յերկրի  
սոցիալիստական շինարարության, արտադրողա-  
կանության և աշխատանքի դիսցիպլինալի բարձ-  
րացման մեթոդներից մեկն եւ Մեր յերկրում  
մենք սոցիալիզմ ենք կառուցում, իսկ նման մի  
վիթխարի գործ փոքրաթիվ մարդկանցով զլուխ  
չի գալ. հենց դրա համար ել կօմմունիստական  
կուսակցությունը հայտարարում ե. վոր սոցիա-  
լիզմի կառուցման գործը միլիոնավոր աշխատա-  
վորների գործն եւ:

Սոցիալիստական մրցության աշխատանք-  
ները թեև բավական ժամանակ ե, ինչ սկսված  
ե մեզ մոտ. սակայն այդ աշխատանքը դեռ լայն  
ծավալ չի ստացել. գործարաններում բանվոր-  
ները պարզորոշ գաղափար չունեն այդ մասին:   
Մի շարք ձեռնարկություններ սոցմրցման պայ-  
մանագիր են կնքել, բայց այդ պայմանագրերում  
ամեն տեսակ վերացական բան կորելի լե զըտ-  
նել. իսկ արտադրողականության բարձրացման  
մասին շատ քիչ կետեր կան, նույնը կարելի լե

ասել ե զյուղի վերաբերմամբ։ Շատ աեղեք այն  
քան վատ են հասկացել սոցմրդման նշանակու-  
թյունը, վոր կազմում են, թե դա մի կամովան-  
իա յէ, ժամանակավոր աշխատանք և կարելի լե  
մի կերպ քարչ տալ, անցկացնել այնինչ ընդհա-  
կառակը, սոցիալիստական մրցությունը լերկա-  
րատե աշխատանք ե, նա կապված ե մեր ար-  
տադրողականության բարձրացման աշխատանք-  
ների հետ։ Բանթղթակիցները պետք ե ամենա-  
ակտիվ աշխատողները լինեն որտադրության մեջ  
սոցմրցության ասպարիզում։


Մեր շատ ձեռնարկություններում բան-  
թղթակիցները հաճախ չզիտեն ինչի մասին հոգ-  
վածներ գրեն տպագիր ու պատի թերթերի հա-  
մար, աշխատում են մի արտակարգ լերեռութ-  
նկատել, վոր անմիջապես վերցնեն, գրեն և ու-  
ղարկեն խմբագրատուն, իսկ յեթե նման արտա-  
կարգ գեպքեր չեն լինում, ձեռքերը ծալած նա-  
յում են։ Բանթղթակիցները պետք են ծանոթ լի-  
նեն արտադրության պրոցեսում լեղած բոլոր  
խնդիրներին, սոցմրցության աշխատանքների ըն-  
թացքն, հավաքական պայմանագրերի կնքման  
հետ կապված խնդիրներին, իր ժամանակին այդ  
ըոլորն արձանագրեն թե պատի և թե տպագիր  
թերթերում։ Սեր պատի թերթերը սովորաբար  
լույս են տեսնում կամ մայիսի 1-ին, կամ հոկ-

տեմբերյան հեղափոխության տարեդարձին և  
կամ նման հեղափոխական նշանակություն ու-  
նեցող տոներին։ Իհարկե, այդ որերին պետք է  
պատի թերթեր լույս ընծայել բայց հիմնականն  
այն ե, վոր թղթակիցները կարողանան նկատել,  
ըմբռնել առորյա խնդիրներ և ոլատի թերթում  
լուսաբանել այդ խնդիրները։ Ներկալումս ամե-  
նահիմնական խնդիրներից մեկը սոցմրցման աշ-  
խատանքներն են, թղթակիցները պետք ե ամեն  
կերպ աշխատեն ծավալել և կռնկրետացնել այն  
ըստ իրենց պայմաններին։

---









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0001609



ԳԱԱ Հիմնարար Օխտ. Գրադ.



FL0001609



ԳԻՆԸ 20 ԿՈՄ. (2 մամուլ)



104.



## Рабкор и его задачи

Госиздат ССР Армении  
Эривань—1930